

«Հասկեր. մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք», Երևան, Հովի.
Թումանյանի թանգարանի հրատ., 2010, ք. 1, էջ 4-28:

ՀԱՅ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Այսօր արդեն թերևս քչերը գիտեն, որ Հակոբ Պարոնյանը (1843-1891)՝ «հայ կյանքին և հայ բարոյականին վրա հսկող անաչառ դատավորը» (Մ. Ճանաչյանի բնորոշումն է), ուն սրատես հայացքից չի վրիպել 19-րդ դարի երկրորդ կեսի մեր իրականության մեջ տեղ գտած գրեթե ամեն մի արատավոր երևույթ՝ լինելով դա քաղաքական թե սոցիալական, կենցաղային թե բարոյական, ուն երգիծանքի սլաքներից սարսափում էին անգամ հայ ազգային երևելիները, և ով երկնել է համաշխարհային մրցակցության գնացող երգիծական բացառիկ ուժի երկեր, հեղինակն է նաև հայ մանկական առաջին պարբերականի: Նա Կ. Պոլսում 1876 թվականի հունվարի 1-ից, իր խմբագրած հիմնական՝ «Թատրոն» երգիծաթերթին զուգընթաց, հայ երեխաների համար սկսում է հրատարակել մի պատկերազարդ երկշաբաթաթերթ՝ «Թատրոն. բարեկան մանկանց» անվանմամբ: Ինչպե՞ս՝ ոչ առանց հիմքի կարող են տարակուսել բանիմացները՝ մատնանշելով մինչև նշյալ թվականը հայ իրականության մեջ երևան եկած մանկական հատուկենտ պարբերականների փաստը, և ինչու՞ նման վերնագրով, ի՞նչ կապ ունի թատրոնը մանկական գրականության հետ՝ անպայման կհետաքրքրվեն հարցասերները:

Հիրավի, Հ. Պարոնյանի «Թատրոն. բարեկան մանկանց»-ի լույսընծայումից դեռևս 22 տարի առաջ՝ 1854-ին, Մեսրոպ Նուպարյան վարժարանի սաների ջանքերով ու խմբագրությամբ Ջնյուննիայում լույս են տեսել «Թութակ Հայկազյան», իսկ հաջորդ տարի՝ «Երկասեր» պարբերականները, որոնք տարաբնույթ նյութերի հետ միասին տպագրել են նաև մանկական երկեր, հանելուկներ, զրույցներ ու հեքիաթներ... Թեև մեր հանրապետությունում այդ պարբերականների հավաքածուների բացակայությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու դրանց հիմնական բնույթի, գաղափարական բովանդակության կամ գեղարվեստական արժանիքների մասին, այնուամենայնիվ «Թութակ Հայկազյանի» երկու համարների (1855-ի 3-րդը և 5-րդը) միկրոֆիլմերից արված պատճենները ենթադրել են տալիս, որ դրանք եղել են վարժարանի աշակերտների գրական երախայրիքները՝ առաջին թոթովանքները, հիմնականում ներառել են կրոնաբարոյական միտվածությամբ գրաբար բանաստեղծություններ և ունեցել են «բարոյական, բանասիրական և ուսումնական» ուղղվածություն, որոնք «ավելի շուտ դպրո-

ցականների ընթերցանության համար նախատեսված նյութերի ուրույն ժողովածուի տպավորություն են թողնում»¹: Ասել է թե՛ մենք բավարար կռվաններ չունենք՝ վերոհիշյալ պարբերական-ժողովածուները համարելու իբրև հայ մանկական մամուլի առաջին օրինակներ:

«Թատրոն. բարեկան մանկանց»-ի՝ հայ մանկական առաջին պարբերական համարվելու հաջորդ մրցակիցը 1872-ից Կ. Պոլսում լույս տեսնող «Ավետաբեր տղայոց»-ն է՝ մի պարբերական, որը «Միսիոներների ամերիկյան ընկերության»՝ «Ավետաբեր» լրագրի (1855-1915) հավելվածն էր: Հիմնականում օտար լրագրողների (Է. Բլիս, Ջ. Գրին, Յ. Բարնըմ, Յ. Ալեն...) կողմից խմբագրվող սույն պարբերականը հետապնդում էր, ինչպես Յ. Պարոնյանը կասեր, «աղետաբեր» նպատակներ. տասնամյակներ շարունակ լուսավորություն տարածելու քողի տակ արևմտահայոց շրջանում տենդագին ջանում էր տարածել բողոքականություն, ինչը կարող էր վտանգավոր դառնալ 19-րդ դարի երկրորդ կեսի հայ Ազգային զարթոնքի ու ազգային-ազատագրական ոգորումների պայմաններում: Կոնկրետ մեզ հետաքրքրող «Ավետաբեր տղայոց»-ի բոլոր համարներում կար, օրինակ, հատուկ բաժին՝ «Սուրբ գիրք կարդացող փոքրիկ տղայոց պատմություն» խորագրով, ուր զետեղվում էին ավետարանական զարմանահրաշ բազմաթիվ պատմություններ, որոնք վերաբերում էին հաշմանդամների բժշկությանը, մեռյալների հարությանն ու զանազան այլ հրաշքներին: ««Ավետաբերը» միայն լեզվով էր հայ,- իրավացիորեն նկատում է ուսումնասիրողը:- Նա չէր տպագրում հայ իրականության հետ կապված և ոչ մի նյութ, հայ ժողովրդի անցյալն ու ներկան արտացոլող որևէ պատմվածք, չէր հրատարակում առհասարակ աշխարհիկ որևէ բան: Ամբողջովին Ավետարանի ու Աստվածաշնչի առակներն ու բարոյախոսական պատմվածքներն էին թարգմանվում ջերմոցային մի հայերենով և հրանցվում հայ երեխաներին, նրանց մեջ առաջին հերթին մեռցնելով ազգային զգացումը, նաև աշխարհիկը, հաղորդակից չդարձնելով նրանց այն գիտելիքներին, որ օգտակար էր լինելու կյանքում»²: Ուրիշ խոսքով՝ հայ մանկական պարբերականների համապատկերում մենք ո՛չ փաստացի և ո՛չ էլ բարոյական որևէ իրավունք չունենք թեև հայատառ, սակայն հայ երեխաներին կասկածելի՝ դեպի օտարացում ու հլություն, կամազրկություն ու կրոնական խորհրդապաշտություն տանող հանդեսին վերապահելու առաջնության պատվավոր իրավունքը, քանի որ վերջնահաշվում այն չի ծառայել իր բուն նպատակին:

¹ Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Մ. Հակոբյան, Հայկական մանկական մամուլի առաջին օրգանները, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, ք. 1, էջ 266-271:

² Ստեփանյան Գ., Հակոբ Պարոնյան. կյանքը և հրապարակախոսությունը, Երևան, «Հայպետհրատ», 1964, էջ 173-174:

Պատկերն ավելի ընդգրկուն դարձնելու և անարդար սուբյեկտիվիզմից խուսափելու նպատակով լսենք նաև այն հեռավոր օրերի ժամանակակցի՝ նշանավոր խմբագիր-հրապարակախոս Հովհաննես Գալսերյանի (1870-1924) կարծիքը՝ գրված այդ առիթով. «Մանկական ու պատանեկան գրականությունը ավելորդ է ըսել կարծենք թե մեծ դեր կատարած է մեր նորահաս սերունդին մեջ, ու քանի որ միշտ նորահաս սերունդ ունինք, ամեն ատեն ալ անոնց համար լրագրի ու գրքի հարցը ունինք մեր ազգին դիմաց:

Նախ դնենք ցանկը այն լրագիրերուն, որոնք մեր մանուկներուն համար տպված են:

1872, **Ավետաբեր Մանկանց** հայ. և հայատառ թրքերեն ամսաթերթ որ կը շարունակվի մինչև այսօր:

1876, **Թատրոն Մանկանց** միայն մեկ տարի:

1882, **Բուրաստան Մանկանց** մինչև 1888:

1889, **Ծաղիկ Մանկանց**:

Ինչպես կերևի վերոհիշյալ ցանկեն, մենք 4 մանկական թերթ ունեցած ենք թրքահայոցս մեջ. **Ավետաբեր Մանկանցը** որ ամսաթերթ էր և կը հրատարակվեր Ամերիկյան միսիոնարաց կողմե, չէ կրցած իր նպատակին ծառայել որովհետև անի միշտ բողոքականության օռկանը եղած է և հոն մանուկներու հարմարագույն հոդվածներու քովիկ կրոնական հոդվածներ կը վխտան:

Ուրեմն **Ավետաբեր** թեև մանկանց համար, սակայն իր բուն նպատակին ծառայած չըլլալուն, չենք ուզեր առաջնության իրավունքը տալ անոր և կուտանք այդ իրավունքը **Թատրոնի** Տեր-խմբագրապետին որ նկատի առնելով թե ո՛րքան կարևոր է երգիծանքը՝ ժողովրդին համար, նույնքան և թերևս ալ ավելի անհրաժեշտ է մանուկներու սիրտը ու հոգին կրթել, կըսկսի հրատարակել իր **Թատրոնին** ձագուկը՝ **Թատրոն մանկանց** որ սակայն դժբաղդաբար միայն մեկ տարի կը տևե:

Թատրոն իր նպատակին կը հասնի, իր նյութերը միշտ օգտակար կըլլան տղաքներուն և Պարոնյան իր այդ գործունեության մեջ ալ իր դիրքը կստանա»³:

Պատմական արդարությունը, սակայն, պահանջում է մի հարցում, կրկնենք՝ միայն մի հարցում շնորհակալ լինելու օտարածին պարբերականին. այն ականա անմիջականորեն խթանել է պարոնյանական «Բարեկամ մանկանց»-ի հրատարակությունը՝ իբրև իր հակադրության, եթե կարելի է այսպես ասել՝ իբրև «հակաավետաբերի» հանդես գալուն, առանց որի տեսանելիորեն կաղքատանար հայ մանկական գրականությունը: Իսկ սա սոսկ ենթադրություն չէ. Հ. Յ. Պարոնյանն իր «Թատրոն» երգիծաթերթի 1875-ի տարեվերջյան համարների հայտարարություններում խոստանում էր, որ իր կողմից շուտով

³ «Մանգունեի էֆքյար», լրագիր, Կ. Պոլիս, 1901, ք. 50:

կիրատարակվի մանկական մի պարբերական՝ «Թատրոն տղայոց» վերնագրով: Եվ քիչ անց թեև փոքր-ինչ սրբագրում է ակնարկված վերնագիրը՝ «տղայոց»-ը փոխարինելով «մանկանց» բառով, բայց և այնպես այդ փոփոխությունը բնավ չի ստվերում «Բարեկամ մանկանց»-ի՝ «Ավետաբեր տղայոց»-ի հենց միայն արտաքննապես հակակշիռը լինելու հանգամանքը: Ի դեպ, ամեն ինչից երևում է, որ մանկական լրջմիտ մի պարբերականի հրատարակությունը երգիծաբանի համար եղել է ազգասիրության ու քաղաքացիական պարտքի, հայ մտավորականի պատվախնդրության լուրջ հարց: Եվ դա նույնիսկ այն դեպքում, երբ 33-ամյա Պարոնյանն արդեն գրեթե լիովին հիասթափված էր լրագրության ապերախտ, միայն նյութական ու բարոյական զրկանքներ բերող բնագավառից, երբ հաճախ իր պարբերականների չվաճառված համարներն ստիպված քաշով ծախում էր նպարավաճառներին՝ գոյությունը մի կերպ պահպանելու համար:

Թուրքական բռնապետության մթնոլորտում, երբ, ինչպես Պարոնյանն էր ասում, «ժամանակը հայերեն չ'հասկնար», երբ «էջ մը ունեցողն ավելի պատիվ և մեծարանք կը վայելէ քան զայն, որ հանճար ունի», և երբ «մոլիներն ալ չեն դադրիր հալածելէ երգիծաբանները», նա ունեցել է հոգեբանական, բարոյական, նյութական ու ստեղծագործական ծանր պահեր: «Պոլիսը թույլ տված էր, որ մեծ էտիրնեցին անոթի ապրի: Պոլստ հայությունը անոթութենէ մեռցուց զայն»⁴, - ցավով արձանագրում է Հրաչ Ջարդարյանը: Հիշենք հենց երգիծաբանի՝ դեռ 1873-ի հուլիսի 7-ին «Մեղվուն» տպագրած «Երեկ հուղարկավորության հանդես մը...» առաջնորդողը, որը բանասիրության մեջ հայտնի է «Ողբ» անունով: Միքայել Կյուրճյանն այն անվանում է «աղետարշ դամբանական մը», ուր «գրագետին դառնությունը երկար ատեն զսպված, կը պոռթկա անօրինակ ուժգնությամբ»⁵: Սա մեծ երգիծաբանի և ընդհանրապես հայ մտավորականի կյանքի դժվար պահերից մեկի, «նեղ օրերից մեկի» ցնցող նկարագրությունն է. գրողը ցավով պատմում է, որ «Մեղու» երգիծաբերթի չվաճառված համարները, ինչպես ինքն է ասում, իր «զավկըները», ստիպված քաշով ծախել է նպարավաճառին. «Երթա՛րք բարյավ զավկըներս, երթա՛րք բարյավ. գիտե՞ք, թե ի՞նչ ցավեր քաշեցի ձեզի համար: Կին մը ամենեն շատը տարին անգամ մը կ'երկնէ, բայց ես ամեն գիշեր, ամեն ցերեկ երկնեցի, զձեզ հղացա և ի լույս ընծայեցի. դուք իմ զավկըներս եք»⁶:

Այս առաջնորդողն ուշագրավ է նաև ուրիշ առումներով. Պարոնյանը նախ՝ քաջ գիտակցում էր երգիծանքի բացառիկ ներգործուն ուժը, երգիծաբանի կյանքի տառապալից ուղին, որ լի է հալածանքներով ու զրպարտություններով, այնուհետև ընդգծում էր, որ իր ծաղրի սլաքներն ուղղված են եղել արատավոր երևույթների դեմ, դրանց մերկաց-

⁴ «Ջարթոնք», լրագիր, Բեյրութ, 1962, թիվ 161:

⁵ Տես նույն տեղում, 1964, թիվ 53:

⁶ Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 8, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1972, էջ 285:

նող ուժը բխել է խոր մարդասիրությունից՝ խայթել՝ ուղղելու, այլ ոչ թունավորելու համար, և ինքն իր կոչմանը վերաբերվել է ամենայն զգուշությամբ ու պատասխանատվությամբ. «Ձձեզ շատ բամբասեցին, ավրեցին ու զրպարտեցին, բայց ինչ ուզեն թո՛ղ ըսեն, դուք իմ զավրկներս եք, կը սիրեն զձեզ... հայր մ'են...»:

Խեղճ զավրկներս, ձեզի համար չարաճճի են կ'ըսեին, բայց դուք ձեր խայթելու պաշտոնն ամենայն զգուշությամբ կը կատարեիք, և եթե խայթեիք ալ չէիք թունավորեր. մինչդեռ ձեր մյուս լուրջ բարեկամները առանց մեկը մյուսը վիրավորելու երկու տող չեն կրնար գրել, և ասոր համար է, որ դատարանները կը դեգերին»⁷:

Ինչպես նկատելի է, մենք կանգնում ենք տարօրինակ երևույթի առջև. մի կողմից խոր հիասթափություն լրագրական գործունեությունից, մյուս կողմից՝ իրար հաջորդող պարբերականների շարան՝ «Սեղու» (1872-1873), «Թատրոն» (1874-1877), «Թիյաթրոն» (1874-1875), «Թատրոն. բարեկամ մանկանց» (1876), «Լույս» (1879), «Ծիծաղ» (1883), «Խիկար» (1884-1888): Ո՞րն է խնդիրը: Ամենից առաջ Պարոնյան մարդու խորապես հայեցի կեցվածքը, ճշմարիտ մտավորականին հատուկ անձնագոհությունը, իսկ խնդրո առարկայի տեսակետից՝ այն, որ արևմտահայոց՝ 19-րդ դարակեսից ծայր առած հանրային-քաղաքական կյանքի բարդ ու ներհակ մթնոլորտում, Ազգային զարթոնքին հաջորդած և 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմին նախորդած տագնապահարույց շրջանում, երբ օտարերկրյա տերություններն արևմտահայոց մեջ պարարտ հող էին տեսնում՝ հոգեորսությամբ զբաղվելու և կրոնական խորհրդապաշտությամբ ու կամազրկությամբ վարակելու հայ շփոթահար մանուկներին, երգիծաբանն այս անգամ ևս իր ձեռքն է վերցնում գեղարվեստական խոսքի ծանրությունը և սկսում հայոց մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության դժվարագույն գործը՝ արժանի հակահարված տալով օտար ու վնասակար, ավելին, ազգաջլատիչ ազդեցություններին...

Ինչ վերաբերում է պարոնյանական հանդեսի վերնագրում տեղ գտած «թատրոն» բառին, կարելի է վստահաբար ասել, որ թուրքական գրաքննության բիրտ, հաճախ ծիծաղի ու անհեթեթության հասնող պահանջների առկայության պայմաններում իշխանություններից բնավ էլ դյուրին չէր վերստին նոր արտոնագրություն ձեռք բերելը, և Պարոնյանը, խուսափելով հնարավոր քաջքշուկներից ու առանց այն էլ իր նյութական սուղ միջոցների հնարավոր նոր զոհողություններից, նպատակահարմար է գտել հրատարակվելիք մանկական պարբերականը դիտարկել իբրև մայր թերթի՝ «Թատրոնի» հավելվածը կամ, ինչպես այն պատկերավոր անվանում է նրա ժամանակակիցը, «Թատրոնին ձագուկը»: Բացի այդ՝ առանձնահատուկ հետաքրքիր է, թե ինչու է Պարոնյանն իր մայր պարբերականն անվանել «Թատրոն»: Այդ խորագիրն ինքնին ընթերցողի գիտակցութ-

⁷ Նույն տեղում, էջ 285-286:

յան մեջ կարող է առաջացնել համաբանական հետևյալ մոտավոր շարքերը՝ լուրջ // անլուրջ, խաղային // ոչ խաղային և այլն: Համաբանական այսպիսի խաղը կարող էր և՛ գիտակցվել, և՛ չգիտակցվել երգիծաբանի կողմից: Դա էական չէ. խնդիրն այն է, որ «Թատրոն» երգիծաբերթում միաժամանակ տպագրվում էին թե՛ լուրջ (հայ հանրության արատները քննադատող) և թե՛ անլուրջ (պարզապես զվարճալի) նյութեր, որոնցով (=խաղ) մերկացվում էր իրականությունը (=ոչ խաղայինը): Հայտնի է, որ թատերաբեմի վրա գրողները սովորաբար բացահայտում են կերպարների իրական դեմքերը, դեմք // դիմակ հարաբերությունը: Այսպիսի գործընթացն էլ ենթադրում է դեմքի և դիմակի փոխհարաբերություն: Գիշտ նույն սկզբունքով է հեղինակն իր գլուծագործոց երկում՝ «Ազգային ջոջեր» երգիծական դիմանկարների շարքում, և այլ ստեղծագործություններում ծաղրում ու քննադատում հասարակության տարբեր շերտերի արատավոր կողմերը՝ արտահայտության ու բովանդակության պլանների աններդաշնակությունը, դիմակի ու իրական դեմքի փոխհարաբերությունը: Ասվածից կարող ենք եզրակացնել, որ «Թատրոն» պարբերականի խորագիրն իմաստաբանորեն բավականին ծանրաբեռնված է:

Հաջորդ կարևոր հարցը, թերևս ամենաէականը, այն է՝ արդյոք Պարոնյանը կարողացե՞լ է պատվով դուրս գալ իր առջև դրված դժվարագույն խնդրից: Անտարակուսելի է, որ երգիծաբան գրողը կանգնած է եղել բարդության առջև. նախ՝ ժամանակի աղետալի սղությունը, ծայրահեղ զբաղվածությունը (բանասիրությունն արդեն վաղուց ապացուցել է, որ «Թատրոն» երգիծաբերթի բոլոր նյութերը, չնչին բացառությամբ, նրա գրչի արգասիքն են՝ ստորագրված մտացածին զանազան կեղծանուններով, և ահա դրանց ավելանալու էին գալիս նորերը՝ դարձյալ հիմնականում իր իսկ կողմից ստեղծվող), ապա՝ նորընտիր բնագավառի անսովորությունը՝ մանկական գրականության ինքնօրինակությունն ու մանկագրի այնքան փնտրված ձիրքը՝ ոչ միշտ հասու գրական հսկաներին, անգամ՝ հանճարներին: Եվ եթե այդ ամենին գումարենք նաև մի ուրիշ նուրբ ու փափուկ հանգամանք՝ երգիծաբանի դեռևս ամուսնացած չլինելը⁸ և հետևապես երեխաների հետ շփման ու նրանց հոգեբանության քաջիմացության պակասը, ապա հարուցված դժվարություններն ավելի ակնառու կլինեն:

Բայց և այնպես, Պարոնյանը պատվով կատարեց ինքն իրեն առաջադրած հիմնախնդիրը. բնավ մանկական գրող համարվելու հավակնություն չունենալով՝ փայլեց նաև այդ ասպարեզում, որի պերճախոս վկայությունը երջանիկ բարեբախտությամբ այսօր պահպանված «Թատրոն. բարեկամ մանկանց» պատկերազարդ երկշաբաթաբերթի ամբողջական հավաքածուն է: Ասում ենք՝ երջանիկ բարեբախտությամբ, քանի որ Պարոնյանն ապերջանիկ էր ամբողջ կյանքի ընթացքում և, թող զարմանալի չթվա, անգամ մահ-

⁸ Հ. Պարոնյանն ամուսնացել է հասուն տարիքում՝ 36 տարեկանում՝ 1879-ի փետրվարին, և ունեցել երկու երեխաներ. առաջնեկը տղան էր՝ Աշոտը (1883-1951), կրտսերը՝ դուստրը՝ Զապելը (1885-1912):

վանից հետո. չպահպանվեցին նրա անձնական թղթերը, շիրմաքար չունեցավ, անդառնալիորեն կորսվեց նույնիսկ գերեզմանը, տխուր հանգամանքների բերումով նրա զավակները ևս չկարողացան հոգալ իրենց հոր թողած գրական ամբողջ ժառանգությունը, և հետագայում միայն որդին՝ Աշոտ Պարոնյանը, մեծ զոհողություններով ձեռք բերեց հոր «Շողոքորթը» կատակերգության ձեռագիրն ու «Թատրոն մանկանց»-ի հավաքածուն և իր մտերիմներից մեկի՝ գրող, մանկավարժ Գուրգեն Թրենցի (1888-1972) խորհրդով նվիրեց Երևանի Մատենադարանին⁹:

Այսօր, իհարկե, անառարկելի է, որ հասկանալի պատճառներով արևմտահայությունը չկարողացավ արևելահայոց պես ստեղծել մանկական հարուստ գրականություն, ուր, ասենք, միայն «Աղբյուր» և «Հասկեր» ամսագրերի շուրջը համախմբված էին նշանավոր այնպիսի հեղինակներ, ինչպիսիք էին Ղ. Աղայանն ու Յովհ. Թումանյանը, Յովհ. Յովհաննիսյանն ու Ալ. Ծատուրյանը, Ավ. Ահարոնյանն ու Ավ. Իսահակյանը, Վրթ. Փափազյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Խնկոյանը և այլք, բայց և այնպես անժխտելի են նաև արևմտահայ հատվածի բերած պատկառելի նպաստն ընդհանրապես հայ մանկական գրականության զարգացման ընթացքին, մասնավորապես Պարոնյանի «Բարեկամ մանկանց»-ի՝ ժամանակին կատարած պատմական առաքելության շահեկանությունը: Այն, որ վերջինիս պարբերականն անմիջապես գերել է հայ մանուկներին, և չափազանց սերտ է եղել տեքստ-ընթերցող աղերսը, վկայում էին նրա «գրասեղանին վրա լեռան պես դիզված» նամակները, որոնց առիթով գրող-խմբագիրն իր հանդեսի էջերում բազմիցս շնորհակալություն էր հայտնում «մեծ ու պզտիկ, չափահաս ու անչափահաս կարդացողներեն, որոնք այս թերթին պիտանությունը կը գովին», խրախուսում ու երբեմն էլ տպագրում առանձնապես շնորհալիների նամակները: Ահա, օրինակ, դրանցից մեկը.

«Առած նամակներուս մեջ շատ կանոնավոր գրված նամակ մը տեսա՝ որ գիտուն տղու մը վայելուչ կերպով՝ ամսուն օրը, տեղը, թվականը, ստորագրությունը ամենքը շենք շնորհք իրենց տեղը գրված էին, ասոր համար հոս վարը կը դնեմ անոր օրինակը որ չգիտցողներն ալ սորվին նամակ գրել:

Իճատիե, 12 Յունվ. 1876

Խմբագիր Տեր

Թատրոն Մանկանց ձեր թերթն առինք կարդացինք, շատ սիրելի եղավ մեզի. հասկցանք որ տասնհինգ օրն անգամ մը կը տպագրվի. երանի՛ թե ամեն օր հրատարակվեր. երանի՛ թե մեզի հասակակից տղայք ամենքն ալ առնեին այս թերթը՝ որուն մեջ սիրուն պատմություններ, գեղեցիկ խրատներ և աղվոր զվարճալիքներ կան:

Ինձի հետ իմ փոքրիկ քույրս՝ Ջապելն ալ իր շնորհակալությունը կը հայտնե ձեզ:

⁹ Մանրամասն տես «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Աշխատասիրությամբ Ալ. Մակարյանի, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 2004, էջ 222-223:

Հանելուկդ կը լուծեն, թե որ խոստացած նվերդ ձեր դեմն ելնող աղքատ տղուն տալ ուզեք:

ՎԱՅԱՆ Մ. ԷՍԱՅԱՆ»¹⁰:

Բնորոշ են նաև հայ գրագետների՝ տասնամյակներ հետո արած խոստովանությունները «Բարեկամ մանկանցի»՝ մանուկ հասակում իրենց վրա թողած բարերար ազդեցության մասին: «1876ին երբ **Թատրոն Մանկանցը** կը հրատարակեր, հայրս կը բերեր ու ես կը կարդայի, - 1901-ին հուշագրում է, օրինակ, «Մանզումեի էֆքյար» լրագրի 30-ն անց խմբագիրը,- այն օրեն սկսա սիրել այդ մարդը որ ուղղակի սրտիս հետ կը խոսեր, իր ոճը մանկական և դյուրահասկնալի էր և սիրուն պատմություններով հաճելի կ'ընծայեր մանուկներու, պզտիկ ոտանավորներ ու հանելուկներ լեցուն էին ամեն մեկ թերթին մեջ և գեղեցիկ պատկերներ կը զարդարեին **Մանկանց Թատրոնի** էջերը:

Իմ մանկական հոգիս համակրած էր իրեն ու այն օրեն կ'ուզեի տեսնել մանուկներու բարեկամ Պարոնյանը:

Օր մըն ալ **Թատրոն** չբերավ հայրս, և ես երբ ցավով կը հարցնեի պատճառը, հայրս ըսավ.

- Հոգ մի ըներ տղաս, Պարոնյան իր գործը թեև դադրեցուցած է, սակայն օր մը նորեն կ'սկսի, անիկա համառ մարդ մըն է»¹¹:

«Բարեկամ մանկանց»-ը հրատարակելու ընթացքում գրող մանկագիրն իրեն հաճախ անչափ վարձատրված է համարել՝ տեսնելով իր տված դասերի ու խորհուրդների շոշափելի, արդեն գործնականում կիրառվող առաջին պտուղները: Առօրյայում «տխուր երգիծաբանը» մի առանձին հրճվանքով է, օրինակ, գրում, որ բազմաթիվ մանուկներ (Սերովբե Պերպերյան, Մաննիկ Գոռանյան, Հովհաննես Փանոսյան...) հանդեսին իրենց «դողդոջուն մատիկներովը գրած սիրուն նամակներով» ապացուցում են, որ օժտված են ոչ միայն սուր մտքով, այլև արդեն «հասկըցուցած են թե ինչպես վայելուչ կերպով պետք է գրել նամակ մը, իմաստալից մեկնություն մը տալ բանի մը. հայտնի կերևի թե ասոնք կրցած են մեր թերթին մեջ երբեմն գրած նամակագրության վարժութենեն օգուտ քաղել» (48): Իսկ սա... հանդեսի ընդամենը վեց համար հրատարակվելուց հետո:

Այս ամենին կարելի է հավելել նաև երգիծաբանի ժամանակակիցների բարձր գնահատականը՝ տրված «Բարեկամ մանկանց»-ին: Ջնյունհայում լույս տեսնող «Արևելյան մանուկ» հանդեսի խմբագիր Սատթեսու Մամուրյանը (1830-1901), օրինակ, խորապես հասկանալով Պարոնյանի պես գրական հսկայի՝ մանկական գրականության ասպարեզ մտնելու դժվարությունը, ողջունել է նրա այդ ձեռնարկը՝ մատնանշելով գործի

¹⁰ «Թատրոն. բարեկամ մանկանց», կիսամյա պատկերազարդ հանդես, Կ. Պոլիս, 1876, թ. 2, էջ 15 (Այսուհետ սույն հանդեսից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն միայն տեքստում):

¹¹ «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», էջ 153:

լրջությունն ու պատասխանատվությունը. «Երբեմն **Մեղուի**, այժմ **Թատրոնի** հեղինակն ոչ միայն գիտե թեմոկրիտեսի ծաղրն ու ծիծաղը մեր թերությանց վրա ցույց տալ և կծու ու մտացի սլաքներով մոլություն ու զեղծունք հալածել, այլև տղայոց հետ պարզ, կրթական լեզվավ խոսիլ, միտք բանալու, սիրտ կրթելու համար հատուկ վեպեր և բարոյական խրատներ հորինել. և այս ավելի դժվարին արվեստ է քան մյուսը: Ազգին մեջ որչափ շատնան այսպիսի թերթեր, այնքան բարենշան երևույթ մ' է...»¹²:

Վերոբերյալները, կարծում ենք, Յ. Պարոնյանի՝ մանկական գրականության բնագավառում թողած վաստակի խոսուն վկայություններից են:

* * *

«Բարեկամ մանկանց»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ մանկական գրականության, դպրոցի ու մանկավարժության ասպարեզում Խաչատուր Աբովյանից (1809-1848) հետո առաջին լուրջ քայլերը կատարել է Հակոբ Պարոնյանը: Վերջինս նպատակ է հետապնդել իր հանդեսի միջոցով «գրական ծաղկոց մը հիմնել սակս (համար.- Ալ. Մ.) փոքրիկ տղայոց, և աստ կրկնել հանապազ այն բարոյական և կրթական դասերը՝ որով միայն կարելի է պատվավոր մարդ և ներհուն քաղաքացի ըլլալ» (8):

Իսկ ի՞նչ ծրագրով էր ներկայանում գրող-խմբագիրը՝ մտնելով գրական նոր ասպարեզ: Հանդեսի անդրանիկ համարի «Հառաջաբանում», որը զետեղվել է իբրև առաջնորդող հոդված ամանորյա շնորհավորանքներից անմիջապես հետո, Պարոնյանը հայտարարում է, որ «Բարեկամ մանկանց»-ի նպատակն է լինելու երեխաների կրթությունն ու դաստիարակությունը, որ այն պարունակելու է կրթական, բարոյախրատական, քաղաքավարական, պատմական, աշխարհագրական, ազգագրական, վիպական, հաշվակալական նյութեր, տնարարությանն ու արհեստներին վերաբերող օգտակար զանազան խորհուրդներ, նաև՝ խրատներ, առակներ ու պարզևաբաշխամբ լուծվելիք հանելուկներ... Ասել է թե՛ Խ. Աբովյանի պես Յ. Պարոնյանը ևս հանդես է գալիս հայ մատաղ սերունդների մեջ ազգային լուսավորություն տարածելու ամենալայն ծրագրով ու ամենաազնիվ միտումներով: Եվ գլխավոր նորությունը, որ ակնառու է դառնում պարբերականի հենց առաջին տողերից, երգիծաբանի պահպանած զարմանալի լրջությունն է, զուսպ ու չափավորված լեզուն, պարզ ու հստակ արտահայտվելու ջանքը՝ այնքան տարբեր «հայոց առաջին զվարթագիր հեղինակի» սովորական ոճից, այն գրչից, որ, ինչպես Մ. Մամուրյանն է բնորոշել, «մերթ մտրակ մ' էր որ կ'արյուններ ընկերային թաքուն վերքեր, մերթ մահակ մ' որ կը ջախջախեր ամպածրար գլուխներ, մերթ սուր մ' որ հայության

¹² «Արևելյան մամուլ», հանդես, Ջմյունիա, 1876, ք. 2, էջ 83:

մարմնույն փտած մասերն կը ջարդեր, միշտ ուղղության և ճշմարտության քարոզ երևելով, և բարոյական հիվանդությանց սպեղանի մը ցույց տալով»¹³: Հանդեսուն Պարոնյան մանկագրի լեզուն տեղ-տեղ անգամ ձեռք է բերում քնարականություն՝ խիստ անհարիր սրախոս երգիծաբանին, և ականա զարմանում ես նաև դեռ չհայրացած մարդուն՝ երեխաներին դիմելու և նրանց հետ մանկական լեզվով խոսելու հոգեբանական հմտություններին:

«Իմ պզտիկ ընթերցողներս, այս **Թատրոն** լրագիրը 15 օրը հեղ մը պիտի տպվի հատկապես ձեզի համար: Ինտոր որ ձեր հայրերը կան ձեր մեծերը ամեն օր խոշոր խոշոր լրագիրներ կը կարդան բան մը հասկնալու համար, նոր բաներ իմանալու համար, անանկ ալ դուք այս **Թատրոնը** կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սովորիք:

Շատ դասեր պիտի տամ ձեզի..., աղվոր պատմություններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սորվեցնեմ, հանելուկներ պիտի ըսեմ ձեզի որ լուծեք:

Եվ այս բաները աղեկ հասկցնելու համար՝ գեղեցիկ պատկերներ ալ պիտի դնեմ այս **Թատրոնին** մեջ. անոր համար չ'ըլլա որ այս լրագիրը պատռտեք կարդալեն ետքը, հապա պահեցեք, ինտոր որ ձեր խաղալիքը կը պահեք. գալ անգամ նոր **Թատրոն** մ'ալ պիտի խրկեմ ձեզի, ասոր քովը դրեք և իրարու կարեցեք. ասանկ ամեն անգամ մեյ մեկ նոր **Թատրոն** առնելով՝ մեկ տարվան մեջ խոշոր գիրք մը ունեցած կըլլաք:

...Սիրուն զավակներս, ըսի թե ձեզի շատ բան պիտի սովորեցնեմ. գիտե՞ք ինչ է սորվեցնելիքներս. ինչ որ պետք է ձեզի կրթյալ և գովելի տղա ըլլալու համար: Ձեր մեջ կան շատեր որ գիտուն տղու մը չվայլելիք բառեր կը գործածին անոնց հայերենը չգիտնալով. կան տղաքներ որ իրենց հորը **աղըպա** կը կանչին՝ չ'գիտնալով որ հայրիկ պետք է ըսել. ասանկ ալ չեն գիտեր որ մայրիկ պետք է կանչել **տուտու** ըսելու տեղ:

Ասոր պես շատ բառեր կան՝ որոնց հայերենը չեք գիտեր դուք. ահա այս **Թատրոնին** մեջ անանկ բառերուն ամեն մեկին առջև հայերենը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով սորվիք և պետք եղած ատենը սխալ բառ չ'գործածիք: Մեծ ամոթ է հայ տղու մը համար երբոր չ'գիտնա թե **օտային** հայերենը **սենյակ** կըսեն, **պաղչային** **պարտեզ** կըսեն, **իսկեմրիին** **նստարան** կըսեն: Հապա ո՛րքան ավելի մեծ ամոթ է այն տղուն որ այս բառերուն հայերենը գիտե և չը գործածեր:

Պիտի սորվեցնեմ ձեզ թե ի՞նչպես պիտի վարվեք և խոսեք ձեզմե մեծին հետ, որ զմայլի ձեր վարքին վրա և սիրե ձեզ սրտանց. ի՞նչ պարկեշտ և խելացի տղա է սա, ըսե:

Երեք տարեկանեն մինչև տասնհինգ տարեկան թե աղջիկ և թե մանչ տղոց համար օգտակար բաներ պիտի գրեմ. պիտի սովորեցնեմ գիր կան նամակ գրել, հաշիվ ընելու տետրակ բռնել այսինքն՝ եկած ստակը և խարճվածը գրել, տանը խնամատարությունը

¹³ Տե՛ս «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերուն և վկայություններուն», էջ 187:

ընել, կերակուր եփել, առուտուրի մեջ չ'խաբվել, հյուր ընդունել կամ ճամբու դնել, զբոսանքի ժամանակ խաղալ, երգել, պարել, մարմնամարզ ընել...» (1-2):

Տողեր ներքև շարունակվում են նույն՝ երեխաների հետ խոսելու զվարթ ու մտերմիկ ոճը, «խոսքը մեր մեջ մնա», «ականջդ բեր՝ ասեմ» փոխվաստահոություն ներշնչող խոսվածքը, նրանց՝ իբրև մեծերի վերաբերվելը, անկեղծ պահվածքը մանուկների՝ հանդեսի ծախսը սեփական ուժերով հոգալու և ծնողներին ավելորդ հոգս չպատճառելու առիթով. «Բայց խոսքը մեր մեջը մնա, գաղտուկ ըսելիք ունիմ ձեր ականջն 'ի վար:- Ես այսչափ բաներ ձեզի սովորեցնել խոստացած ատենս, կան անանկ բաներ որ ես ալ ձեզմե սորվելով պիտի գրեմ, ինչպես որ այս **Թատրոն**ին մեջ գրած պատմություններուս շատը ձեզի պես պզտիկ տղոցմե սորված եմ:

... Սիրուն զավակներս, այս ամեն սորվեցնելուս համար մեկ բան մը պիտի ուզեմ ձեզնե. ամեն մեկ **Թատրոն**իս համար 50 փարա պիտի տաք ինձ, որ ես ալ թուղթի և մեկանի տամ և որ գրեթե 100 տրամ խնձորի կամ ափ մը շաքարի գինն է: Բայց այս 50 փարան ձեր գանձանակեն պիտի տաք՝ ինտոր որ խաղալիքի կամ պտուղի համար կուտաք: Այս կերպով ձեր մեծերուն ծանրություն տված չեք ըլլա» (4):

«Բարեկամ մանկանց»-ուն զետեղված նյութերն ունեն բավական լայն շառավիղ, և դրանք կարելի է բաժանել թեմատիկ բազմաթիվ խմբերի՝ ճանաչողական (աշխարհագրություն, պատմություն, ազգագրություն, մարդաբանություն, կենդանաբանություն, նշանավոր մարդկանց մասին զվարճալի զրույցներ...), բարոյախրատական (ազնվության դրվատում, գողության, ծնողներին չլսելու պատճառով փորձանքների մեջ հայտնվելու, ազահության կամ որկրամոլության և նման խնդիրների մասին պատմող հեքիաթներ, զրույցներ ու առակներ), կրթական (գրավոր արտահայտվելիս միտքը գրագետ շարադրելու, օտար կամ բարբառային բառերի փոխարեն հայերեն համարժեքներ օգտագործելու, ընթերցասիրության և այլնի խորհուրդներ), քաղաքավարական (ճաշելիս կերակուրներից ու սպասքից ճիշտ օգտվելու, մաքրասիրության, վարքի, խոսվածքի ու տարբեր իրավիճակներում պահվածքի բազմաթիվ կանոններ), առօրյա-գործառական (հաշվակալական անհրաժեշտ գիտելիքներ ուսուցանող նյութեր, մթերքները տևականորեն ճիշտ պահելու, տնարարությանը, ասեղնագործությանն ու արհեստներին վերաբերող օգտակար խորհուրդներ) և ժամանցային (ձեռնածության, ծածկագրության, զանազան խաղերի վարժանքներ)...

«Բարեկամ մանկանց» հանդեսի մի պատկառելի մասն են կազմում նաև գրական երկերը, որոնք պայմանականորեն կարելի է դարձյալ դասդասել՝ հանդեսի ներքին կառույցն ավելի շոշափելի տեսնելու համար. դրանք նախ՝ հիմնականում ինքնուրույն, արձակ ստեղծագործություններ են (զանազան պատմվածքներ, նորավեպեր, առակներ, ա-

նեկդոտներ, հեքիաթների բավական հաջողված մշակումներ...)»¹⁴, որոնց մեջ փայլում է պարոնյանական հանճարը, և որոնք, լինելով միջժամրային ինքնօրինակ ներիյուսումների արգասիքներ, կարոտ են մի առանձին ու ծավալուն ուսումնասիրության: Հատկապես ինքնատիպ են «Մըռտո ախպարը և կատու-նապաստակը», «Կարմիր Վարդուկը» հեքիաթների պարոնյանական մշակումները: Հաջորդ խումբը չափածո երկերն են՝ ոտանավորներ, ինքնուրույն կամ ընթերցող երեխաների (օրինակ՝ Արա Գալենտերյանի) կողմից հյուսված հանելուկներ, թարգմանական առակներ Եզովպոսից, Լաֆոնթենից ու Կռիլովից՝ հիմնականում կատարված աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբոր՝ Գաբրիել եպիսկոպոս Այվազյանի և ժամանակին մեծ համարում ունեցող Խորեն արքեպիսկոպոս Գալֆայանի (Նար-Պեյ) եղբոր՝ Ամբրոսիոս Գալֆայանի կողմից, նաև ընթերցող աշակերտներից (օրինակ՝ Կարապետ Խոսքանցյանի) հրամցված առակներ: Գրական երկերի մեջ մի առանձին խումբ են կազմում եվրոպացի տարբեր հեղինակներից (Շառլ Պերրո ո, Էռնեստ Լըկուվիե...) կատարված թարգմանություններն ու փոխադրությունները, որոնք, կարծում ենք, արվել են հենց Պարոնյանի կողմից, քանի որ նա հրաշալի տիրապետել է 5 օտար լեզուների՝ հունարենի, ֆրանսերենի, իտալերենի, անգլերենի ու թուրքերենի¹⁵:

Իսկ «Բարեկամ մանկանց»-ում մի՞թե իսպառ բացակայում է աստվածաշնչյան թեման՝ այնքան սրտամոտ ժամանակաշրջանին ու այնքան հիմնական՝ «Ավետաբեր տղայոց»-ի համար: Անշուշտ կա, պարոնյանական հանդեսում ևս առկա է այդ թեման, սակայն միանգամայն այլ երանգավորմամբ: Նախ դրանք թվով սահմանափակ են՝ ընդամենը մի քանիսը՝ նվիրված Ադամի ու Եվայի, Հովսեփ Գեղեցիկի, Ղավթի և Գողիաթի պատմություններին, և, բացի այդ, իրենց վրա կրելով անհատական մշակման թանձր ներկապնակը, հանդես են բերվում բոլորովին այլ՝ արդեն խորապես աշխարհիկ, բարոյախրատական հանդերձավորմամբ:

Որպես օրինակ՝ փորձենք քննել հանդեսի 2-րդ համարում տպագրված՝ «Ադամ Եվային խաբվիլը» գրույցը: Պարոնյանը «Ծննդոց գրքում» զետեղված հայտնի պատմությունը երեխաներին մատչելի՝ սեղմ տողերով ու գրույցի ձևով ներկայացնելուց անմիջապես հետո գրում է, որ «հիմա ասոր վրա շատ ծուլ մարդիկ սովորություն ըրած են մեղադրել Ադամ Եվան ու ըսել՝ թե ինչու՞ խաբվեցավ, որով չարաչար աշխատելու պարտավոր ըրին մեզ, եթե ոչ՝ հիմա մենք հանգիստ կյանք պիտի վարեինք», և ապա անցնում է ժամանակակից մի պատմության: Մի երկրի թագավոր որսի ելած ժամանակ կորց-

¹⁴ Դրանց շարքում երբեմն-երբեմն տեղ էին գտնում «Արևելյան մամուլի» ձիրքաշատ խմբագրի՝ Մատթեոս Մամուրյանի մանրապատումները («Թեթև բարեկամ», ք. 16, «Բաղդավոր Կոմիտասը», ք. 18):

¹⁵ Այդ մասին տես Յ. Պարոնյանի քրոջ որդու՝ Մաքսուտ Սանտալճյանի վկայությունը, «Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», էջ 133:

նուն է ճամփան և յուրայիններին փնտրելիս պատահաբար հանդիպում է փայտահատ ամուսինների: Աղքատ կինը տրտնջում է «ծակաչք Եվայից»՝ ասելով, որ նրա պատճառով են հիմա իրենք աշխատում ու տառապում: Ամուսինն էլ իր հերթին Ադամին է քննադատում՝ ավելացնելով, թե ինչու վերջինս «իր կնկանը գեշ խրատին ականջ կախեց»՝ փոխանակ ապտակելու... Թագավորը, լսելով ամուսինների խոսակցությունը, նրանց տանում է պալատ՝ այդպիսով ապահովելով վերջիններիս անհոգ ու անքրտինք կյանքը: Մեկ ամսից հետո թագավորը կարգադրում է էլ ավելի ճոխացնել ամուսինների ապրելակերպը՝ «տասներկու տեսակ կերակուրին տեղ՝ քսանչորս տեսակ հրամցունեն անոնց, բայց սեղանին վրա ուրիշ գոց աման մըն ալ դնել տալով՝ կը պատվիրե որ մարդ չբանա անոր խուփը» (13): Քիչ անց, սակայն, ամուսինները չեն կարողանում դիմանալ գայթակղությանը, և փայտահատը, անսալով կնոջ տևական հորդորներին ու լացուկոծին, բարձրացնում է ափսեի կափարիչը, և այնտեղից անմիջապես դուրս է պրծնում մի մուկ ու անհետանում: Իսկ բարկացած թագավորը պալատից դուրս է շարտում ապերախտներին:

Պատումի դիպաշարն առաջին հերթին ենթադրել է տալիս, որ այնտեղ ընդգծվում է մարդ արարածի ընդհանրապես մեղսագործ բնույթը, բայց հեղինակը վերջում անակնկալ անցումով այսպես է դիմում հանդեսի ընթերցողներին. «**Թատրոն**իս մեջ ինչու՞ դրի ես այս պատմությունը գիտե՞ք, խելացի տղայք. ուզեցի հասկցնել որ այս աշխարհքիս մեջ մարդիկ, թե մեծ ըլլան և թե պզտիկ, թե տղա և թե չափահաս, միշտ փորձության որոգայթին (տուզախ) մեջ կիյնան: Գիտե՞ք ինչ է փորձությունը. ամենուն գիտցած և շատ անգամ ամենուս գլուխը եկած բանն է որ **փորձանք** կըսվի. որու՞ն գլուխը եկած չէ մեծ կամ պզտիկ փորձանք մը. բանն ան է որ օգուտ քաղե անկե և խրատվի» (14): Ինչ խոսք, սա հայտնի ավանդության՝ դրախտում տեղադրված սահմանի արգելքը խախտել-չխախտելու շարժառիթի բոլորովին նոր՝ շրջված մեկնաբանությունն է՝ բարոյախրատական ակնհայտ միտվածությամբ:

Պարոնյան մանկագիրը, որքան էլ ձգտում է երեխաներին հրամցվող մանրապատումների մեջ հիմնականում մնալ զուսպ ու սթափ, երգիծանքից զերծ ոճի սահմաններում, այնուամենայնիվ, մերթընդմերթ ականայից խախտում է իր սկզբունքը և լիաթոք ծիծաղում: Այսպես, օրինակ, «Քրիստոսի մեկ հրաշքը» մանրապատման մեջ անդրադառնալով Հիսուսի՝ Ավետարանից քաջահայտնի մի հրաշքին՝ ընդամենը հինգ հացով հինգ հազար մարդու կշտացնելու ավանդությանը, պատմում է անեկդոտախառն զրույց մի վարդապետի մասին, ով, երբ քարոզի ժամանակ շփոթվում ու ասում է, թե «հինգ հազար հացով հինգ հոգի կշտացան», ու արժանանում է ունկնդիրներից մեկի սրամիտ դիտողությանը, փորձում է արդարանալ հետևյալ կերպ.

«- Իրավունք ունիք, օրինած, վրա կը բերե վարդապետը իր սխալմունքը պարտկել ուզելով, բայց ես գիտնալով այնպես ըսի, հասկնալու համար՝ թե արդյոք քարոզս մտիկ կընե՞ք, եթե ոչ կը քնանաք» (28):

Հիշենք նաև երգիծական սրախոսության մի ուրիշ օրինակ՝ այս անգամ գրված հանդեսում, որպես կանոն, զետեղված կենդանիների ու թռչունների (թվով 24՝ առյուծ, կապիկ, գայլ, նապաստակ, աղվես, փոկ, սամույր, չղջիկ, բու, սարյակ...) բնութագրումների «Եղնիկ» հատվածում: «Այս կենդանիին քաջությունն ալ Նապաստակին պես իր ոտքերուն վրա է. պզտիկ ձայն մը առնելուն պես կծիկը կը դնե. աչք բանալ գոցելու չմնար՝ դրե՛ր ես նե գտիր: Այս պատճառով որսորդներեն շատերը **արծաթով** կը զարնեն Եղնիկը, երբոր չկրնան կապարով (դուրշին) զարնել. այսինքն՝ ստակով ծախու կառնեն ուրիշեն՝ տուն դառնալով իրենց քաջությանը վրա պարծենալու համար: Ասանկ քաջ որսորդներն են որ Եղնիկին միսը շատ համով է կը զրուցեն, բայց եկու տես որ առանց զանազան համեմներով (թերախե) եփելու, ուտվելու բամ չէ ասոր միսը» (40):

Պարոնյանը հանդեսում երբեմն էլ զետեղում է երգիծական երկխոսություններ, որոնք իրենց թեթև ու զվարթ ոճով առանձին կենդանություն և գրավչություն են հաղորդում պարբերականին: Ահա, օրինակ, դրանցից մեկը.

- « - Հիմակվան երեկոյթներուն (սոարե) մեջ ի՞նչ կընեն մինչև առտու:
- Ձանձրացողները կաշխատին որ ուրիշներն ալ իրենց պես ձանձրացունեն:
 - Ե՞րբ պիտի վերնա աս **մոտան**:
 - Երբոր ամենքն ալ աղեկ մը ձանձրանան: Ամեն **մոտա** ձանձրությունով կը վերնա:
 - Ե՞րբ պիտի ձանձրանան:
 - Երբոր ձանձրութենեն ուրիշ անանկ **մոտա** մը ելնե՝ որ մարդ չձանձրացունե» (40):

«Բարեկամ մանկանց»-ն իր համարներում, ինչպես արդեն նշել ենք, պարբերաբար տպագրում էր նյութեր՝ նվիրված համաշխարհային և հայրենի աշխարհագրությանն ու պատմությանը, նշանավոր տարբեր քաղաքներին, նավահանգիստներին, բնության զարմանահրաշ երևույթներին, կենդանական ու բուսական աշխարհին... Այդ ընթացքում կարևորագույնը, սակայն, այն է, որ ուշարժան տեղեկությունները մատուցվում են ոչ ինքնանպատակ. դրանք բոլոր դեպքերում ուղղվում են մանուկների, ինչպես Ս. Թաղիադյանը կասեր, «մտացու զբոսանք» տալուն, ճարտարապետական կոթողների, պատմական հերոսական անցյալի, կենդանիների և այլնի նկատմամբ նրանց մեջ սեր ու հարգանք արթնացնելուն: Բերենք մի քանի բնորոշ օրինակներ:

Պարոնյանը մանուկներին ճանաչողական տեղեկություններ սկսում է հաղորդել հանդեսի հենց 2-րդ համարից՝ սկզբնամասում տեղադրելով «Կոստանդնուպոլիս» վերտառությամբ ակնարկ-հոդվածը: Պատկերավոր ոճով սկսելով Արևելքի ու Արևմուտքի հատման կետում գտնվող իր բնակած երկրի՝ մեկ միլիոն երկու հարյուր հազար բնակչություն ունեցող մայրաքաղաքի նկարագիրը՝ նա ծանրանում է հատկապես այնտեղ ապրող հայերի վրա, բացատրում նրանց մեծ մասի «դուրսեցիներ» լինելու հանգամանքը, ներկայացնում նաև անասելի թշվառության պայմաններում ապրող շուրջ քառասուն հազար հայ տարագնացներին: «Չայերը այսօր ամենեն շատ են,- գրում է Պարոնյանը,- որոնց համրանքը երկու հարյուր հազար հոգիի չափ կը հաշվեն՝ կնիկ ու էրիկ մարդ, մեծ ու պզտիկ մեկտեղ սեպելով:

Ժամանակավ ալ Չայ կար այս քաղաքին մեջ, բայց խիստ քիչ. հազիվ 150 տարի կա որ մեր ազգեն շատեր եկան դուրսերեն հոս բնակելու. Չայաստանի և Պարսկաստանի քաղ աքներեն, Վանեն, Սուշեն, Կարինեն, Ակնեն հարյուրավոր մարդիկ ամեն օր իրենց ծնած ու մեծցած տեղերը թողլով հոս կը թափեին: Պոլսեցի են ըսող ամեն Չայ թե որ այսօր քիչ մը հետաքրքիր ըլլա, իսկույն կը հասկնա որ կամ իր հայրը, կամ մեծ հայրը և կամ շատ շատ իր մեծ հորը հայրը Վանեն կամ Ակնեն կամ ուրիշ հեռավոր Չայու քաղաքե մը եկած է:

Ասկե կը հասկցվի որ Պոլսո այսօրվան Չայերուն ամենքն ալ պանդուխտ կը սեպվին. քառսուն հազարի մոտ ալ խեղճ խարիպներ կան՝ որոնք իրենց ընտանիքեն, տունեն տեղեն հեռու անտանելի խեղճության մեջ կապրին»(10):

Ինչպես նկատելի է, հեղինակը թաքնված ենթատեքստում ամենից առաջ մատնանշում է անում պոլսահայ գաղթօջախի ստեղծման բուն ակունքը՝ հեռուներում միայնության մեջ մնացած հայրենի եզերքը, և որոշ տարբերակում մտցնում «պանդուխտ» ու «ղարիք» հոմանիշների միջև՝ վերջինիս մեջ իրավացիորեն ավելի խտացված տեսնելով տարագրության բերած ցավի խոսքիմաստային նշանակությունը: Այստեղից հասկանալի է դառնում նաև մեծ մտավորականի նպատակը՝ մատաղ սերնդի սրտում սեր արթնացնել ցավալի հանգամանքների բերումով աստանդական դարձած կարոտյալ հայրենակիցների նկատմամբ:

Ի դեպ, հետագայում հանդեսի 16-րդ համարում գրողը զետեղում է երկու մասից բաղկացած ազդեցիկ մի նկար, որի աջ կողմում տեղադրված է Կ. Պոլսի փողոցներից մեկի մի բեկոր՝ հեռվում երևացող մզկիթով և քայլող ու զրուցող մարդկանցով, իսկ ձախում՝ վանեցի չորս բեռնակիրների պատկերներ: Բնաշխարհից Կ. Պոլիս եկած թավ ընչացքներով այդ հայրորդիները, որոնց կազմվածքները վկայում են իրենց ֆիզիկական առեւելի ուժի ու առողջության մասին, պարուրված են անծայր թախծով. նրանցից մեկը,

բեռան վրա նստած, աջ ձեռքը գլխին հենած, լուռ մտորում է, մյուսը, ով բոկոտն է, և ձախ ոտքը դրել է համետին, նույն տրամադրությամբ նայում է գետնին, նրանց միջև կանգնած երրորդ ընկերը ևս իր հեռուն հառած տրտմալից հայացքով մասնակից է ընդհանուր տրամադրությանը: Եվ միայն չորրորդն է, ով, հայրենակիցներից փոքր-ինչ հեռու կանգնած և համետը մի կողմ գցած, կողքանց նայող իր հայացքում արտահայտում է ինքնավստահություն ու զսպված զայրույթ... Բնորոշ է նաև նրանց մոտեցող թափառական ինչ-որ շան ներկայությունը, որը, բերանը բաց և պոչը խաղացնելով, ապշած նայում է բեռնակիրներին:

Հանդեսի խորաթափանց խմբագիրը, հատուկ միտումով մանուկներին ներկայացնելով այդ նկարի մեկնաբանությունը՝ «Ահա աշխարհ, ահա մարդ» վերնագրով, նրանց մատաղ հոգիներում սեր ու կարեկցանք է արթնացնում աշխատանքի ու գեղեցկության այդ ասպետների նկատմամբ: Չկարողանալով զսպել մեր գայթակղությունը՝ այն ներկայացնում ենք ամբողջությամբ՝ երկարաբանության համար կանխավ հայցելով ընթերցողի ներողամտությունը.

«Իմ պզտիկ բաժանորդներս՝ այս պատկերը տեսնելով շուտով պիտի ճանչեն իրենց ամեն օր տեսած Հայ բեռնակիրներու պատկերն ըլլալը, և առջի բերան շատ չպիտի զարմանան, բայց եթե անգամ մը ուշադրություն ընեն հոս ըսելիքներուս, այն ատեն պիտի հավնին և շատ անճման պատկեր մը ըլլալը պիտի խոստովանին:

Աշխարհիս ո՛ր կողմը կուզես ճանբորդե ո՛ր պատմիչին կամ ճանբորդին կուզես հարցուր, չես կրնար գտնել ազգ մը, ժողովուրդ մը, ցեղ մը՝ որ Վանա և Մուշի Հայերուն չափ վայելուչ կազմություն մը ունենա, մարմնով այնքան ուժեղ ըլլա, տեսքով՝ այնքան գեղեցիկ, և իր ահեղ կազմվածքովն հանդերձ՝ այնքան ալ խոնարհ ըլլա վարքով:

Իմ փոքրիկ սիրելի ընթերցողս, Վանցի բեռնակիրներն մեր ազգակիցներն ըլլալուն համար չէ իմ գովեստս. կորովի և բարձրահասակ ուրիշ ցեղեր ալ կան աշխարհիս վրա, բայց չկա անանկ ցեղ մը որ բնության ամեն կատարելությունն ունենա այս Հայերուն չափ. ո՞ր ցեղն ունի այս բարձր հասակը, այս հաղթանդամ մարմինը, այս սև ու ահարկու պեխերը, այս ջղոտ ազդրերն՝ որ մինչև 300 օխա¹⁶ կշռող բեռան տակ պինդ կը կենան:

Շատերը մեղադրած են շատ անգամ այս Հայկա թոռները, թե ինչու՞ իրենք զիրենք անասնոց կարգը դասելով բեռ կրող կենդանյաց գործերը կը տեսնեն: Ես կը կարծեմ որ, եթե այս բեռնակիրներն իրենց այս տաժանելի աշխատանքին չպարապին և քաղաքացվոց հատուկ փափկասիրության հետևին, շատ չտևեր իրենց այս անճման

¹⁶ Ծանրության թուրքական չափ՝ 1282 գրամ:

ուժեղությունը կը կորսնցընեն, որովհետև ծանր աշխատությունները մարդույս մարմինը զորացնելու կօգնեն» (124):

Պարբերականում տպագրված ճանաչողական-հայրենասիրական նյութերի մեջ առանձնանում է հատկապես «Մասիս լեռը» հոդված-տեղեկատվությունը՝ զետեղված հանդեսի պատվավոր՝ առաջին էջում: Գովեստի նկատմամբ այնքան ժլատ ու խստապահանջ երգիծաբանի գրիչն այստեղ իրեն դրսևորում է տրամագծորեն հակառակ կողմով. գրողը ջանք չի խնայում դրվատանքի ու կարոտի ջերմ խոսքեր ասելու իր հայրենիքի հավերժ գոյության խորհուրդը մարմնավորող բիբլիական լեռան մասին, լեռ, «որուն արթուն հարյուրավոր դարերն է վեր իշխող թագավորի մը պես հաստատ կեցած է Հայաստանի մեջ»: «Եվ իրավցնե Մասիսեն ավելի ի՞նչ կա մեծ, վսեմ և հիանալի,- շարունակում է հեղինակը,- որ այնքան փառավորություն ունեցած ըլլա հիշատակությանց մեջ: Թող ըսեն մեզի թե Հայաստանեն զատ աշխարհիս մեջ ո՞ր երկիրն ունի քաղաք մը, շենք մը, տեղ մը, լեռ մը որ իր հնությանը կարենա այսքան պարծել» (81): Պարոնյանը հանդեսի տիտղոսաթերթը զարդարող գեղադիր նկարի համապատկերում հայ մանուկներից այնուհետև բացատրում է, որ «պատկերին աջ կողմը, լեռան քովիկը երևցած շենքերը Վաղարշապատ քաղաքին են. այս քաղաքը 2526 տարի առաջ Մեծն Երվանդ Հայոց թագավորը շինեց, որ ետքը Վաղարշ թագավորը նորոգելով իր անունը դրավ անոր»: Հոդվածում չեն մոռացվում նաև Աստվածաշնչում Մասիսի՝ Արարատ համարժեք անվամբ հիշատակվող սրբազան լեռան վրա իր տապանը կանգնեցրած Նոյ նահապետը, «Հայոց ամենամեծ և առաջին եկեղեցին՝ որ մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը շինել տալով անունը դրավ Էջմիածին», այն, որ «ամեն Հայու սրտին մեջ ալ գծված է այս Կաթողիկե տաճարին սրածայր գմբեթներուն ձևը», և թերևս ամենակարևորը՝ «Աղավնին՝ որ ձիթենիի ճյուղ մը բերանն առած կը թռի Էջմիածնա թագադիր գմբեթներուն վրայեն: Ի՞նչ ուրախության ավետիս է այս որ կը բերե մեզի: Հարցուցեք անգամ մը իրեն» (82): Եվ այստեղ ահա կանգ ենք առնում ենթատեքստում թաքնված մեծ խորհրդի առջև՝ արդյոք աղավնին բերում է Երկրից՝ Համաշխարհային ջրհեղեղի նահանջելու՞ ավետիսը, թե՞ մի ուրիշ ավետիս՝ այնքան տանջող համայն հայությանը՝ Հայոց աշխարհի ազատագրությունը... Կարծում ենք՝ վերջինը, և հենց դա էլ նկատի ունեն գրողը: «**Թատրոնը** գիտե ասոր բերած ավետիսը, բայց չուզեր ըսել մինչև որ վստահ չըլլա թե ուրիշի չպիտի ըսեք», - այսպես խորհրդավոր էլ ավարտում է իր ակնարկ-հոդվածը հայ ժողովրդի արժանավոր գավակներից ամենասրամիտը:

«Բարեկամ մանկանց»-ում տեղ են գտել նաև տիեզերական, բնության արտասովոր երևույթներին նվիրված ինքնատիպ տեղեկություններ, որոնք կարող էին զարգացնել հայ մանուկների միտքը: Ընդ որում, դրանք շարադրված են պատկերավոր ու հյութեղ ո-

ճով, վավերական իրողությունների ստույգ նշումներով: Ահա, օրինակ, «ատեն ատեն երկինքին երեսը տեսնված հիանալի երևույթներեն մեկին»՝ Յուլիսասփայլին նվիրված հոդվածը: Պարոնյանը հիշատակում է 1870-ի հոկտեմբերի 12-ի գիշերը, երբ Կ. Պոլսո բոլոր թաղերում մարդիկ, անհանգստացած հրագույն անսովոր հրավառությունից, փողոցներն էին թափվել՝ կարծելով, թե ահարկու հրդեհ է բռնկվել: Իսկ երբ համոզվում են, որ այդ հրավառությունը երկնային է, մեկ էլ սկսում են գուշակություններ անել գալիք մեծ աղետի մասին, ինչպես գիսավոր աստղերի՝ երկնքում երևալու ժամանակ: Հակոբ Պարոնյանը, որ Միքայել Նալբանդյանի պես գտնում էր, թե «մեր ազգը մինչև խելապատակը լցված է» սնոտիապաշտական տխմար գաղափարներով և «կավեղեն ոտքերով թավալգլոր կանգնած է անդունդի եզրին», վերոհիշյալ շարադրանքից անմիջապես հետո ավելացնում է, որ «այս գուշակությունը մարգարեական չէր», ընդհակառակն, քիչ անց (1871-ին) հաշտություն է կնքվում պատերազմող երկրների՝ Ֆրանսիայի և Պրուսիայի միջև: Ինչպես բոլոր դեպքերում, այստեղ ևս մանկագիր հեղինակն ուշադիր է. ջանում է մանուկներին հեռու պահել ժողովրդական սուտ ու պատիր հավատալիքների հյուսած որոգայթներից¹⁷: Ճիշտ է, նա դեռ չուներ և չէր էլ կարող ունենալ անհրաժեշտ գիտելիքներ՝ բացատրելու համար մագնիսական դաշտ ունեցող բոլոր մոլորակների մթնոլորտի վերին շերտերի լուսարձակումների, այդ թվում՝ Յուլիսասփայլի (լատ.՝ *Aurora Borealis*, *Aurora Australis*) առաջացման պատճառները՝ իբրև հետևանք մոլորակի մագնիսական դաշտի ու արևային քամու ազդեցության, այնուամենայնիվ, դա համարում է տիեզերական բնական երևույթ՝ շեշտադրելով բացառիկ հրաշքը՝ լուսարձակման գեղեցկության ցնծությունն ու երփնազան գույները. «Երևակայեցեք խավար գիշեր մը՝ սաստիկ մութ ամպերու մեջեն դեպ ի վար ձգված օձիկ օձիկ **տանթելայի** (ժ ան յ ակ .- Ալ. Մ.) ծալքերով լուսեղեն վարագույր մը ծիրանի գոտիի գույներով. կարմիր, կանանչ, մանիշագույն, կապույտ, դեղին գույներով հրեղեն վարագույր մը, վրայի կողմեն ու երկու քովերեն շիտակ կտրված և իր շառավիղներուն հոսանքը դեպ ի վար ճառագայթած. այս լուսափողփող վարագուրին թեպետ ճիշդ բայց քիչ մը ավելի աղոտ մեկ պատկերը վրայի կողմեն կերևի՝ որ բուն Յուլիսասփային անդրադարձ ցոլացումը կամ ստվերը կը կարծվի: Այս բոցաճաճանչ վարագուրին վարի կողմեն ծովու ալիքներու նման լույս մը կը ցոլանա կանոնավոր օձիկ օձիկ ձևով և հիանալի շարժմամբ.

¹⁷ Սնոտիապաշտությունը հաճախ է քննադատվել «Բարեկամ մանկանց»-ի նաև կենդանիներին ու թռչուններին հատկացված հատուկ բաժնուն: «Բու» հատվածում, օրինակ, խոսելով ժողովրդի մեջ ամրակայված այն համոզման մասին, թե բուն «չարագուշակ թռչուն» է, Պարոնյանն անմիջապես տալիս է սեփական բացատրությունը՝ մանուկներին հեռու պահելով ցնդաբանություններից. «Ասանկ ըսողներն ու՞ր սորված են արդյոք այս շինծու առասպելը. կարծեն թե առջի բերան տղայքը վախցնելու համար հնարած են այս սուտը, և ետքն երթալով ավելորդապաշտ մեծերն ալ սկսած են հավատալ: Բուն Աստուծո ստեղծած անհամար թռչուններեն մեկն է: Բնական պատմությունը մարգարեի հատկություն մը չտար այս անվնաս թռչունին...» (136):

վարագուրին ետևեն հրալից փամփշտի (ֆիշենք) պես անհամար կայծկըլտուքներ կը սլանան օձապտույտ ցայտունով՝ դեպ ի մութ ամպերուն մեջ» (58): Անտարակուսելի է, որ այսպես կարող էր գրել միայն բացառիկ երևույթի գեղեցկությունն ըստ ամենայնի ուսումնասիրած արտասովոր ընդունակ ու գեղագետ մարդը:

Գրող մանկագրի առջև դրված խնդիրներից մեկն էլ եղել է իր հանդեսի միջոցով հայ երեխաներին աշխարհի գիտական նորություններին և նշանավոր կառույցներին ծանոթացնելը: Այսպես, օրինակ, «Գետնափոր ճանբա» ակնարկում հաղորդվում է Անգլիայի Քենթի Ֆոլքսթոուն քաղաքը Ֆրանսիայի Կալե քաղաքին կապող Լա Մանշ նեղուցի թունելի շինարարական աշխատանքների սկսվելու մասին¹⁸ և շեշտվում դրա օգտակարությունը եվրոպական երկրների մասին. «Այս օրերս սկսած են գետնափոր ճանբա մը բանալ ծովուն տակեն ճիշդ Գալեի նեղուցին ներքևեն, որ 25 մղոնի ճանբա ըլլալով՝ շոգենավը 2 1/2 ժամեն կը հասնի Գալեեն մինչև Տուվրը, գրեթե Պոլսո կամուրջեն մինչև Պեոյուքտերե» (53):

* * *

«Թատրոն. բարեկամ մանկանց» կիսամսյա պատկերազարդ հանդեսը, որի ամեն մի համար բաղկացած էր 8 էջից, ու բարեխղճորեն տպագրվում էր յուրաքանչյուր ամսվա 1-ին և 16-ին, հրատարակվեց 1876-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 16-ը՝ 193 էջերում ամփոփելով 24 համարներ (ներառյալ նյութերի ցանկը): Ինչպես հանդեսի առաջին համարում Պարոնյանը ժամանակին հրապարակավ բացատրել էր իր մանկական պարբերականի լույսընծայման անհրաժեշտությունը, հանդես եկել որոշակի ծրագրով ու խանդավառությամբ, այնպես էլ վերջին համարում՝ «Հրաժեշտ» վերտառությամբ հատվածում, անհրաժեշտաբար հրաժեշտ է տալիս իր մանուկ ընթերցողներին, բայց այս անգամ՝ խոր ցավով, իր գրչին ոչ հատուկ եղերական երանգներով, որոնք մեծապես հիշեցնում են տարիներ առաջ «Մեղու» երգիծաթերթի չիրացված համարների՝ նպարավաճառին քաշով տալու առիթով գրված «Ողբը»: Պատճա՞ռը... Նյութական նույն անձուկ վիճակը, բաժանորդների խիստ պակասը (նրանք չէին անցնում 220-ից) և ընդհանրապես թուրքիո մեջ հայկական պարբերական հրատարակելու անլուր տառապանքը: Այստեղ ամենից ուշարժանը, սակայն, պարոնյանական հրաժեշտի խոսքի նրբին ոճավորումներն են, արտահայտչամիջոցների ազդեցիկ պատկերավորությունն ու մանուկների մատաղ հոգիները գործվագույթ մոր սրտացավությամբ հանկարծ չվշտաց-

¹⁸ Լա Մանշ նեղուցի թունելը ծովի հատակով անցնող՝ այսօր ամենաերկարն է աշխարհում (31 մղոնից (50 կմ) մի փոքր ավելի), որի նախնական գաղափարից մինչև նախագծում ու կառուցում տևել է գրեթե 200 տարի: Բացվել է 1994-ին Կալեում՝ Անգլիայի Եղիսաբեթ II թագուհու և Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանի կողմից:

նելու զգուշավորությունը, նաև... գաղտուկ պատվիրանը՝ ասված դեռևս կարդալ չիմացող երեխաների ծնողների ականջներին՝ պարբերականի դադարեցման բուն պատճառի մասին լռություն պահպանելը: Եվ, վերջապես, գեղարվեստական մի ուրիշ հնարանքի կիրառում. եթե «Ողբում» հանդես էր եկել որդեկորույս հայրը, ապա այստեղ երևան են գալիս սեփական երեխաների պարզ կարիքները հոգալ չկարողացող, ծայրահեղ չքավորության մեջ հայտնված շփոթահար մայրն ու իր ուսերին կրակե մի քանի շապիկներ կրող և դրանցից մեկից ազատվելու փորձ կատարող գրողը...

«Ահավասիկ **Թատրոն՝ Սանկանց Բարեկամն** իր տարեկան շրջանը լրացուց՝ առանց բնավ իր վիճակեն դժգոհություն հայտնելու, մեկ տարի շարունակ ընթերցանության և հրահանգության զվարճալի նյութեր տվավ իր փոքրիկ բաժանորդներուն՝ առանց իր նեղ վիճակը բերան առնելու, որպեսզի չկոտրե անոնց փափուկ սիրտը: **Թատրոն** այն աղքատ մոր պես ըրավ՝ որ իր ունեցածը չունեցածը կը ծախսե խնձոր կամ շաքար ուզող և **չկայն** չհասկցող իր անմեղ ու միամիտ զավակը գոհ ընելու համար: Այսուհետև չկրնար՝ իր այս վիճակը ծածկել, քանի որ իր հրատարակությունը դադրեցնելու ստիպված է, ուստի պետք է, որ այս դադարման պատճառը գաղտնի խոստովանի իր մեծ բաժանորդներուն ականջն ի վար, այնպես որ իր փոքրիկ բաժանորդներն իմանալով չվշտանան:

Չարկ չէ որ մեկը տպագրական գործերու հմուտ ըլլա, ամենքը կրնան մակաբերել թե ասանկ բազմապատկեր, գեղեցիկ տպագրությամբ և աժան թերթ մը չկրնար Մեկ Արծ. Մեճիտ տարեկանով և 220 բաժանորդով ապրիլ, որոց մեկ մասն ալ դեռ անվճար կը մնան տարին լրանալեն հետո: Անոնք որ կը կարծեն՝ թե նորանոր և գեղեցիկ պատկերներով ասանկ հրատարակություն մը կրնա 1000են պակաս բաժանորդով շարունակվիլ, կը սխալին. դյուրին է ուրեմն հաշվել թե ո՞րքան վնաս կրած ենք: Փորձ մ' էր ըրինք, և մեծապես վնասվեցանք, ժամանակիս նեղությունն ալ ոչ նվազ ուղղակի պատճառ մըն էր մեր վնասը բազմապատկելու: Վնասը կրակե շապիկ է, կըսեն. չկա այսօր մեկը որ այս շապիկեն մեկ քանի հատ իրարու վրա հագած չըլլա, բայց մեր կրնակն ամենեն ավելի **Թատրոն**ին կրակե շապիկեն այնչափ սաստիկ տաքցավ՝ որ մազ մնաց **կրակ կա՛յ** պիտի պոռայինք, ուստի հարկադրեցանք գոնե այս շապիկը հանել մեր կրնակեն:

Մեր բարեկամներեն ոմանք տեղեկանալով մեր այս վիճակին՝ կրակը մարելու համար ջուր հասցնել, կամ, ինչպես որ կըսեն, զմեզ քաջալերել ուզեցին շատ բաժանորդ գտնել խոստանալով. այս պատճառավ էր որ **Թատրոն**ի վերջին երկու թվոց հրատարակությունն ուշացուցինք՝ հուսալով որ թերևս կրնանք բավական քանակության հասցընել բաժանորդաց թիվը. բայց այս ապագա բաժանորդներն 60են ավելի չեղան. եթե խել մ'ալ մեր արդեն ունեցած 220 բաժանորդներեն պակսին, հայտնի է թե մեր հրատապ և խան-

ծոտած կրնակը զովանալիք չունի: Այս սարսափն է որ հարկադրեց զմեզ թերթիս հրատարակությունը դադարեցնել» (188):

Պարոնյանի այս տողերն ունեն հասարակաբանական արժեք, ըստ որոնց՝ կարող ենք ասել, որ պոլսահայ գաղթօջախն ապրում էր անբողջությամբ այլ արժեքներով: Պարբերականի «վախճանն» ասվածի հետևանքն է: Հայ համայնքի ծնողներն իրենց վաստակաց զուճարներն ուրիշ էլ ինչի՞ վրա պիտի ծախսեին: Պարոնյանական տողերը հետաքրքիր են նաև այն իմաստով, որ գրող-խմբագիրը բարոյական պատասխանատվություն է զգում բացատրել պարբերականի դադարեցման պատճառները: Այս տեքստն ինքնին թաքնված «բողոք» է հանրությանը, ով չի ցուցաբերում անհրաժեշտ շահագրգռություն ու հետաքրքրություն սերունդների դաստիարակության գործում:

Հրաժեշտի խոսքը, սակայն, դեռ ավարտված չէ. անձնվեր մտավորականն ու հայ հանրային-քաղաքական կյանքի անաճնական գործիչը, կրակված հրապարակագիրն ու հանճարեղ երգիծաբանը դեռ ասելիք ունի. զսպված դառնությամբ ու անթաքույց քամահրանքով խորապես ցավում է հանրության աչքում հոգևոր արժեքների անկման համար, դեպի կործանում տանող մի անկում, ուր զլացվում է անգամ հանուն հոգևոր սննդի արվող ծախսը «գրեթե 100 տրամ խնձորի կամ ափ մը շաքարի» գին ունեցող օգտակար պարբերականին. «Ուստի մեր համակիր բարեկամաց ներողամտությունը խնդրելով՝ մեր հրաժեշտի ողջույնը կուտանք բազում շնորհակալությամբ հանդերձ: Իսկ ծնողաց և պաշտպանաց համար երկար համբերություն կը մաղթենք՝ որով կարենան խոսք հասկցնել մեր թախանձող փոքրիկ բաժանորդաց, որոց ձեռքեն խալսելու մեկ հատիկ ճարն է՝ տասնհինգ օրն անգամ մը **Թատրոնին** տեղ մեկ մեկ խնձոր տալ իրենց ձեռքը» (188)¹⁹:

Այսպես, ահա, դադարում է հայ մանկական առաջին պարբերականի հրատարակությունը, մի պարբերականի, որը թեև ունեցավ կարճ կյանք, բայց նմանվեց այն ասուպին, որը, մի միջոց հրճվալից լուսավառվելով երկնականարում, իր թողած ցնծության ծիրը հասցրեց մինչև երրորդ հազարամյակ և այսօր էլ դեռ շարունակում է հուզել հայ սերունդներին... Իսկ «կրակե շապիկով» հանճարեղ երգիծաբանն իր նվիրական հանդեսի դադարումից հետո վերստին նետվեց հայոց հանրային-քաղաքական ու գրական-մշակութային կյանքի հրդեհների մեջ՝ մեկուկես տասնամյակ ևս այրվելու գալիքի համար...

¹⁹ Հինգ ամիս հետո՝ 1877-ի հունիսի 1-ին, վերստին հրապարակ է գալիս «Բարեկամ մանկանց»-ը, բայց արդեն նոր խմբագրի՝ Կ. Յազմաճյանի հրատարակությամբ (Պարոնյանն այնտեղ սոսկ արտոնատերն էր և որևէ կապ չունեի հանդեսի բովանդակության հետ): Նոր «Բարեկամ մանկանց»-ը միանգամայն զուրկ էր պարոնյանական փայլից, տառապում էր միակողմանիությամբ, ողողված էր կրոնաբարոյական միատիցիզմով և գոյատևեց 1 տարի:

Albert A. Makaryan

THE FIRST ARMENIAN CHILDREN'S PERIODICAL

Summary

Children's Friend can be rightly considered the first Armenian children's periodical. The article centers on its brilliant publisher and editor Hakob Paronian, the most celebrated figure among Armenian satirists, *the Armenian Moliere*, as some critics call him. Under very hard financial circumstances Paronian managed to continue *Children's Friend* and issue it as a twice monthly. The magazine was a success with young readers of different ages. It included fiction, poetry and retellings of classic fairy tales, brief articles specifically adapted for children on history, geography, wild life and even lessons of ethics and moral principles.